

---

**ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՉԵՎԵՐԻ՝  
ՀՆԴԿԱՅԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՀԱՅՅԵՑԱԿԱՐԳԸ**

**ՀԱԿՈՐ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, ՀԵՆՁԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

Հինգուկես դար ընդմիջումից հետո հայոց պետականության վերականգնումը 1918 թվականին արդյունքն էր ոչ միայն տևական պայքարի, այլև ազգային-ազատագրական պայքարի տեսության և ազգային պետականության վերակերտման գաղափարաբանության, որը սկզբնավորվել էր դեռևս 18-րդ դարի կեսերին հնդկահայ համայնքում:

Հայ ժողովրդի մղած բազմադարյա ազատագրական պայքարը որակական նոր փուլ թևակոխեց 18-րդ դարում: Մի կողմից Եվրոպայում ծավալված լուսավորական շարժման, բուրժուական հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների վերելքը, մյուս կողմից՝ նոր թափով ծավալված ռուս-թուրքական պատերազմները այս դարում նպաստավոր պայմաններ ստեղծեցին թուրքերի ու պարսիկների լծի տակ հեծող հայ ժողովրդի ազգային ոգու աշխուժացման համար:

Արևմտյան Եվրոպայում վաղ բուրժուական տնտեսակարգի ծնունդը և նրան ուղեկցող լուսավորական հզոր մշակույթը առաջ էին բերել մի շարք խոշոր քաղաքական-հասարակական շարժումներ՝ ի դեմս նիդերլանդական, անգլիական, ֆրանսիական հեղափոխությունների, գերմանական ռեֆորմացիայի և ազգային-ազատագրական շարժումների, որոնց շնորհիվ անկախություն ձեռք բերեցին բազմաթիվ ժողովուրդներ:

Ուշագրավ է, որ հայ ժողովրդի մեջ ևս վաղ բուրժուական հարաբերությունների ծլարձակումը և հայ լուսավորական շարժումը խթանեցին ազգային-ազատագրական շարժումները՝ ասիական բռնապետություններից՝ Թուրքիայից ու Պարսկաստանից, ազատագրվելու և անկախություն ձեռք բերելու համար:

Այս աննախադեպ վերելքին մեծապես նպաստել էին 18-րդ դարի կեսերից Մերձավոր Արևելքում սրված միջազգային նոր հարաբերությունները, դեպի Բալկաններ ու Կովկաս Ռուսաստանի առաջխաղացման ուժեղացումը:

Հայոց ազգային-ազատագրական պայքարի հիմնական առանձնահատկությունն այս պատմաշրջանում այն էր, որ ծավալվում էր ոչ թե մեկուսի ու լոկալ միջավայրում, այլ այնպիսի տարածաշրջանում, որտեղ խաչաձևվում էին ժամանակի բոլոր գերտերությունների շահերը, որի հետևանքով փոքրաթիվ հայ ժողովրդի ցանկացած դիրքորոշման միջազգայնացումը դառնում էր անխուսափելի: Համաշխարհային հակամարտությունների այս կիզակետում որքան բարդանում էին հայության ազատագրության ուղիներ որոնող գործիչների առջև ծառայած խնդիրները, այն-

քան տարաբնույթ, երբեմն իրարամերժ էին դառնում ազատագրական շարժման առաջարկվող ծրագրերը: Տարբեր վայրերում ապրող, տարբեր քաղաքական ուժեր ներկայացնող գործիչները տարբեր կերպ էին ընկալում ստեղծված իրավիճակը և առաջադրում տարբեր ծրագրեր: Այսուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր գտնել նոր ուղի, առաջադրել ծանրագույն վիճակից դուրս գալու իրատեսական ճանապարհ: Որքան էլ տարաբնույթ լինեին այդ մոտեցումները, այնուամենայնիվ նրանք լրացնում էին միմյանց և դառնում ազգային-ազատագրության համընդհանուր գաղափարաբանություն: Հասարակական գիտակցություն թափանցած սեփական ազգի իրավունքների պաշտպանության գաղափարը այս պատմաշրջանում իշխող է դառնում հանրային կյանքի բոլոր ոլորտներում:

Հայկական լուսավորականությունը և ազգային-ազատագրական շարժման վերելքը եվրոպականի հետևողականությամբ զարգանալու ուղագրավ օրինակ է հնդկահայ գաղութի մտավորականների՝ հատկապես Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի և Սովսես Բաղրամյանի գործունեությունը: Բարձրակարգ մտավորականների այս համաստեղության ջանքերով մշակվեցին.

1. ազգային-ազատագրական շարժման կուռ ու ամբողջական տեսություն,
2. ազգային պետականության վերակերտման գաղափարաբանություն,
3. ապագա պետության կառավարման ձևի և կառուցվածքի հիմնական սկզբունքները:

Հովսեփ Էմինը, մոտիկից ծանոթանալով հայ ժողովրդի կենցաղին, համոզվեց, որ խավարի ու տգիտության մեջ խարխափող ժողովուրդը թուրքիայի ու Պարսկաստանի լծից միայնակ չի կարող ազատագրվել: Նա ծրագրում էր հայերից ու վրացիներից ստեղծել մարտունակ բանակ, ազատագրել Հայաստանը և ստեղծել հայ-վրացական դաշնային պետություն:

Թուրք-պարսկական լծից Հայաստանի ազատագրության հարցը Շահամիր Շահամիրյանը Հ. Էմինի նման կապեց մի կողմից Վրաստանի հետ համագործակցության, մյուս կողմից՝ Ռուսաստանի անմիջական աջակցության հետ:

Ազգային-ազատագրական շարժման հայ տեսաբաններից առաջինը Սովսես Բաղրամյանն էր, ով հերքեց դրսի անշահախնդիր օգնության գաղափարը և հիմնավորեց, որ յուրաքանչյուր նվաճված ժողովուրդ ինքը պետք է ազատագրի իր հայրենիքը:

Առանձին քննարկման թողնելով Հայաստանի ազատագրական պայքարի ռազմավարության ու մարտավարության մասին հայ լուսավորիչների մշակած ծրագրերը՝ սույն հոդվածում կանդիդատական ասպագա պետության կառավարման և հատկապես՝ կառուցվածքի ձևերի՝ նրանց առաջադրած հիմնախնդիրներին:

Հայտնի է, որ պատմության անբարենպաստ պայմաններում պետականության կորուստը ուղեկցվել է ժողովուրդների բնավորության որակական արժեքների անկումով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդպիսի ժողովուրդները ձեռք են բերել թերարժեքության բարդույթ, որը բնու-

թագրվել է որպես պատմական չարիք: Թերաթեքության բարդույթի դրսևորման հիմնական ձևերն են՝ բնավորության ավանդական արժեքների թուլացում, զոհի բարդույթ, սեփական ազգային հավաքական ուժի նկատմամբ անվստահություն, ազգային հպարտության կորուստ, անմիաբանություն, պարտվողականություն, ստրուկի հոգեբանություն և այլն: Այս իմաստով բացառություն չէր նաև հայ ժողովուրդը: Այդ էր պատճառը, որ, Ս. Բաղրամյանի կարծիքով, գերության դատապարտված հայ ժողովուրդը նույնիսկ չի փափագում ազատություն: Իր այդ վիճակը բնական համարելով՝ կտտանքներից ու տանջանքներից վիատված հայ մարդը սրտում ցավ չի զգում՝ կարծելով, թե դրանով հնազանդության աստվածային պատվիրաններն են կատարում, որ այդ ամենը հետևանք է սեփական մեղքերի<sup>1</sup>:

Թերաթեքության բարդույթ ունեցող ժողովուրդները եթե ցանկանում են գոյատևել, առաջին հերթին պետք է ձերբազատվեն այդ չարիքից: Այդ գիտակցումով էլ հայ ժողովրդի ազգային գործիչները ձգտել են բացահայտել թերաթեքության բարդույթի արմատները և գտնել դրանց վերացման ուղիները: Յայտնի է, որ հայ ժողովրդի ազատագրության համար ծավալված շարժումը 14-18-րդ դարերում մեկ նպատակ է ունեցել՝ իսլամական աշխարհի ճիրաններից փրկել հայ ժողովրդին: 400-ամյա այդ պայքարի քառուղիներում առաջինը Էմինը, Շահամիրյանն ու Բաղրամյանն էին, որ այդ հարցի լուծման երաշխիք համարեցին ազգային պետականության վերականգնումը:

Ազգային պետականության վերականգնման անհրաժեշտությունը հիմնավորող այս գործիչները առաջադրեցին նաև ապագայում ստեղծվելիք պետության կառավարման ձևի իրենց տարբերակները: Սովսես Բաղրամյանը, օրինակ, առաջադրում էր դասային - ներկայացուցչական միապետություն ստեղծելու գաղափարը, ըստ որի՝ միապետի իշխանությունը սահմանափակվելու էր ներկայացուցչական մարմնի, այսինքն՝ տարբեր դասերի՝ հոգևորականության, ազնվականության և ծնունդ առնող վաճառականության օրինախորհրդատու լիազորություններով: «...Իշխանությունը ինչ-որ միմիայն մեկի դատողությանն ու կառավարմանը չպետք է ենթակա լինի,- գրում է Բաղրամյանը,- այլ ամենալավագույնը կլիներ, եթե իշխանությունը անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդականներից և տեսակ-տեսակ խորհրդարաններից: Այդ դեպքում միայն իշխանը կարող էր ժողովրդի հանդեպ ամեն մի խղճմտանքից ազատ լինել և երջանկորեն վայելել իր երկիրը, որի շնորհիվ և երկիրը կլիներ խաղաղ ու բարեկարգ վիճակում: Բանն այն է, որ թերևս ընտրյալներից մեկնումեկը սխալվի կամ ինչ-որ հանցավոր գործով տապալվի. (նման պարագայում) մյուսները կարող են նրան փութանակի ուղղել ու ոտքի կանգնեցնել: ...Չէ որ բազմասյուն առաստաղը սյուներից մեկի խորտակվելու դեպքում չի տապալվի, այլ կարող է երկար ժամանակ դիմանալ, մինչև որ նորից կառուցվի: Յակառակ դեպքում իսկ չի բերի այնքան վնաս, որքան մեկ սյան վրա հաս-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Եր., 1991, էջ 30:

տատվածը...»<sup>2</sup>: Նման դասային - ներկայացուցչական ժողովները բնութագրական են ֆեոդալական մասնատվածությունից սահմանադրական միապետության անցման դարաշրջանին:

Բաղրամյանի զինակից Յովսեփ Էմինը, հետևելով արևմտաեվրոպական լուսավորիչներին, առաջադրում է սահմանադրական - միապետական վարչակարգի գաղափարը: «Այս հեղինակը,- Անգլիայի սահմանադրական - միապետական վարչակարգի մասին խոսելիս գրում է Էմինը,- դեռևս համառորեն շարունակում է պաշտպանել իր ճիշտ կարծիքը այդ հռչակավոր հանրապետական ազգի մասին, որի գերընտիր օրենքները նմանվում են ոչ թե մի ճրագի, որ միայն տիրոջ բնակարանն է լուսավորում, այլ նմանվում է արևի, որ իր փառահեղ լույսը սփռում է ամբողջ տիեզերքի վրա»<sup>3</sup>:

Ուսումնասիրողները միաձայն պնդում են, որ ապագա Հայաստանում, ըստ Շ. Շահամիրյանի, պետք է հաստատվեին պառլամենտական հանրապետական կարգեր: Հայտնի է, որ ըստ հայոց սահմանադրության՝ Շահամիրյանի նախագծի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը լինելու էր Հայոց տունը՝ ընտրովի պառլամենտը, իսկ բարձրագույն գործադիր մարմինը լինելու էր դարձյալ ընտրովի նախարարների խորհուրդը, որի նախագահը լինելու էր պետության բարձրագույն գործադիր պաշտոնյան: Նա ընտրվելու էր ժողովրդի կողմից և հաշվետու էր լինելու Հայոց տան առաջ: «Բոլոր փոխանորդների միջից,- սահմանում է «Որոգայթի» 20 հոդվածը,- նախարարի պաշտոնի համար Հայոց տան կողմից ընտրվելու էր մի մարդ՝ պատվի ու գավառի տեր, բուն հայ ազգից, Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ, և Հայոց տնից երեք տարի ժամանակով նրան տրվելու է նախարարի պաշտոնի հրաման՝ ըստ օրինակի նմանության»<sup>4</sup>:

Նախարարի պաշտոնի նշանակման հրամանի օրինակը «Որոգայթի» 51-րդ հոդվածն է, որում նշվում է, որ Հայոց տունը նախարարին իշխանություն է տալիս, որպեսզի նա տերը լինի համայն հայերի, ծառայի հայ ժողովրդին, առաջնորդվի հայոց օրենքներով, լինի հայոց առաջին պաշտոնատարը և սպասավորը<sup>5</sup>:

«Ժամկետը լրանալու պատճառով,- սահմանում է «Որոգայթի» 96-րդ հոդվածը,- նախարարը, հեռանալով նախարարության պաշտոնից, կարող է անցնել տանուտերության պաշտոնի, եթե իր գավառի ժողովուրդը նրան փոխանորդության թուղթ տա: Իսկ նախարարության գահից հեռանալը հայ ազգի մեջ նախատինք չպիտի համարվի, եթե ոչ պատիվ՝ իր գործը լավագույնս կատարելու համար»<sup>6</sup>:

Պառլամենտական հանրապետական կարգի ջատագով Շ. Շահամիրյանը, այնուամենայնիվ, զիտակցում էր, որ հայ ժողովուրդը միանգամից չի կարող անցնել ժողովրդավարական հանրապետական կարգերի: Նա

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>3</sup> «Յ. Էմինի կյանքն ու արկածները», Բեյրութ, 1958, էջ 23:

<sup>4</sup> «Որոգայթ փառաց», թարգմանությունը գրաբարից և ծանոթագրությունները՝ Պ. Խաչատրյանի, Եր., 2002, էջ 80:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 93:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 128:

գտնում էր, որ վերականգնվող հայոց պետությունը պետք է անցնի կայացման երկու փուլ. առաջինում հաստատի սահմանադրական միապետական կարգեր, երկրորդում՝ ժողովրդավարական հանրապետական կարգեր: «Որոգայթ փառացի» 52-57 հոդվածներում նա ուղենշում է սահմանադրական-միապետական վարչակարգի անցման իրատեսական ճանապարհը: «Իսկ եթե այժմ, կամ հետագայում,- սահմանում է «Որոգայթի» 52-րդ հոդվածը,- ժամանակներ անց մեր նախնի Հայկի սերնդից, կամ էլ մեր հարազատ Վաղարշակի ու Բագրատի սերունդներից հայտնվի մի ոմն (ոմանք) և անձամբ հավակնի Հայաստանյայց նահապետի (պաշտոնին), կամ թե որդեցորդի ժառանգությամբ ու երդմամբ խոստանա պաշտել Աստծուն՝ ըստ Հայաստանյայց եկեղեցու ավանդության կարգի, հնազանդվել օրենքներին, որ հրապարակվում են Հայոց տնից ու տանուտերերից, նաև իր վրա պարտականություն վերցնի ըստ Հայաստանյայց օրենքների հատուցել իր ձեռքով կատարած գործերի վնասը՝ իր կյանքի բոլոր օրերի ընթացքում միշտ մնալով նույն դիտավորությամբ, ինչպես նշված է 51 գլխում, նախարարի մասին օրենքում, ապա այդ դեպքում մեր պարտքն է սիրով ընդունել նրան և մեծարել փառք ու պատվով, տալ նրան նախարարության պաշտոնի հրաման՝ ըստ օրենքի 51 հոդվածի՝ այն հավելումով, որ նա մշտապես նախարարության պաշտոնի ժառանգակալ է մնալու իր կյանքի բոլոր օրերի ընթացքում: Իսկ կամ մահվան և կամ ինչ-որ մեղքի մեջ ընկնելու հետևանքով նրա բացակայության դեպքում նրա ավագ ժառանգն է իր նախորդի փոխարեն ընդմիշտ գրավելու պաշտոնը»<sup>7</sup>:

«Որոգայթ փառացի» 53-57 հոդվածները լուսաբանում են սահմանադրական միապետությանը բնորոշ իշխանության բարձրագույն մարմնի՝ նախարարի ժառանգականության կարգի մանրամասները<sup>8</sup>, մանրամասներ, որոնք առավել հստակեցնում են մեր առաջադրած այն տեսակետը, ըստ որի՝ հանրապետական Շահամիրյանը, հետևելով արևմտաեվրոպական լուսավորիչներին, պառլամենտական-հանրապետական կարգերին անցման նախընթաց շրջանում առաջադրում է սահմանադրական միապետական կարգերի հաստատման անհրաժեշտության գաղափարը:

Ազգային զարթոնքի աննախադեպ վերելքի այս փուլում Շ. Շահամիրյանը մշակում է ոչ միայն Հայաստանի ազատագրության ծրագիրը, ապագա Հայաստանի պետական կառավարման կարգը սահմանող սահմանադրության նախագիծը՝ «Որոգայթ փառացը», հնդկահայոց համայնական ինքնավարության կանոնադրությունը՝ «Նշավակը»<sup>9</sup>, ռուսական կայսրության Աստրախանի տարածաշրջանում ապրող հայկական համայնքների Ռուսաստանի հետ ունենալիք հարաբերությունները կարգավորող դաշնագրության նախագիծը<sup>10</sup>, այլև ստեղծվելիք հայկական պետության կառուցվածքի և արտաքին՝ միջպետական հարաբերությունների հաստատման հիմնական սկզբունքները սահմանող կանոններ:

<sup>7</sup> «Որոգայթ փառաց», էջ 94:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 94-95:

<sup>9</sup> Տե՛ս «Տետրակ որ կոչի Նշավակ», Մադրաս, 1783:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 57-58:

Ըստ պետական կառուցվածքի ձևի՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է լիներ միակազմ (միատարր, ունիտար): Միակազմ պետության կարևորագույն հատկանիշներից մեկը տարածքն է՝ այն սահմաններով, որում գործում են մարդկանց վարքը սահմանող և կարգավորող օրենքները, հրամանագրերը և իրավական մյուս ակտերը: Այդ տարածքը ձևավորվում է պատմականորեն՝ ազգային-էթնիկական, տնտեսական, մշակութային և այլ կապերի հիման վրա և ամրագրվում է միջազգային իրավունքով, միջպետական պայմանագրերով և իրավական այլ նորմերով: Միասնական տարածքի՝ որպես միակազմ պետության հատկանիշի գիտակցումով Շ. Շահամիրյանը իր սահմանադրության նախագծի հենց առաջին հոդվածով հռչակում է Հայոց պետության սահմանները՝ ընդգրկելով ողջ Հայկական բարձրավանդակը<sup>11</sup>:

Միակազմ պետություններում, բնակչության ազգային կազմից անկախ, պետական լեզու է համարվում տիտղոսակիր ազգի լեզուն: Շահամիրյանը իր նախագծի հոդված 2-ում հայոց լեզուն հռչակում է պետական և պարտադիր լեզու: «Հայաստան երկրում ծնված ամեն մարդկային բնություն... ինչ ազգի և դավանության էլ պատկանի՝ պարտավոր է խոսել և կարդալ հայաբառ և հայատառ»<sup>12</sup>:

Միակազմ պետության տարածքում, այսինքն՝ պատմական Հայաստանի ողջ տարածքում պետք է գործեր մեկ սահմանադրություն, պետական իշխանության միասնական մարմին, միասնական զինված ուժեր, միասնական հարկային ու ֆինանսական համակարգ: Օտարերկրացիները, ազգային փոքրամասնությունները, այլադավանները, բացի վարչատարածքային մարմիններից, այլ կառույցներ չպետք է ունենային: «Որոգայթի» 204 հոդվածով նախատեսվում է, որ «Հայոց տնից այլազգին պաշտոն չի կարող ստանալ, այլ միայն նրանք, որոնք բուն հայոց ազգից են և Հայաստանյայց սուրբ եկեղեցու դավանությամբ»<sup>13</sup>:

Հայտնի է, որ միակազմ պետությունները լինում են կենտրոնացված և ապակենտրոնացված: Շահամիրյանն առաջադրում է կենտրոնացված միակազմ պետության մոդելը, որում այլազգի փոքրամասնություններն ու այլադանդները չունեն իրենց ինքնավարությունը: Այսուհանդերձ, հայոց սահմանադրության նախագիծը 3, 4, 128 և 370 հոդվածներով որոշ ազատություն և ինքնավարություն է տալիս ազգային ու կրոնական փոքրամասնություններին, որով Շահամիրյանին հաջողվում է օրենքի գերակայության, պետության սոցիալական ուղղվածության, ժողովրդավարության սկզբունքների կիրառումով ապահովել մարդու իրավունքներն ու ազատությունները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր շերտերի համար: «Յուրաքանչյուր մարդկային բնություն,- սահմանում է «Որոգայթի» 3 հոդվածը,- թե՛ հայ և թե՛ այլ ազգից՝ ծնված Հայաստան աշխարհում և կամ օտար երկրից պանդխտած Հայաստան, ... ամենքն էլ ապրելու են համահավասար ու ազատ են լինելու իրենց բոլոր գործերում. ոչ ոք ոչ

<sup>11</sup> Տե՛ս «Որոգայթ փառաց», էջ 74-75:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 146:

մեկի վրա իշխելու իրավունք չունի, իսկ նրանց ձեռքի գործերը պետք է վարձատրվեն համապատասխան ամեն մի աշխատանքի՝ ըստ Հայոց օրենքի»<sup>14</sup>:

Ըստ իրավունքի այս բարձրագույն սկզբունքների՝ պետության մեջ ապրող բոլոր ժողովուրդները պետք է բավարարված լինեն, ինչ սոցիալական կազմ կամ էթնիկական պատկանելիություն էլ որ ունենան: Այսպիսով, մի կողմից կարգավորվում են այլազգի անհատի իրավունքներն ու շահերը, պետության պարտավորությունները նրա հանդեպ, մյուս կողմից՝ նրանց պատասխանատվությունը պետության հանդեպ:

Առավել ուշագրավ է «Որոգայթի» 370 հոդվածը, որը էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների համար նախատեսում է տեղական ինքնավարման հաստատության գոյությունը: «Հայաստան աշխարհում բնակվող թե՛ հեթանոս, թե՛ մահմեդական, թե՛ երբայեցի և թե՛ մյուս օտարազգի այլադավաններն ազատ են ամեն կերպ պահպանելու իրենց ավանդական ու վաղեմի ծեսերը: Իրենց մեջ եթե որևէ տարածայնություն ծագի, անհրաժեշտ է, որ ըստ իրենց սովորույթի՝ իրենց միջից իրենք ընտրեն դատավոր, տոկոսի թուղթ հաստատեն, որպեսզի հնազանդվեն իրենց դատավորի վճռին (բացի մահվան դատավճռից): Եվ այդպիսով ոչ մի դատավոր և դատաստանատուն իշխանություն չունեն նրանց նկատմամբ»<sup>15</sup>:

18-րդ դարում արևմտյան մշակույթի ընդհանուր վերելքի շրջանում, հայ իրականության մեջ ևս ծլարձակում են միջազգային ինտեգրման գործընթացները, որոնք նպաստում են հայ ժողովրդի միջպետական, միջմշակութային, միջկրոնական, միջքաղաքական հարաբերությունների սաղմնավորմանը: Այդ համագործակցությունը, ըստ Շահամիրյանի, պետք է ստեղծվեր, ժամանակակից արտահայտությամբ, համադաշնության (կոնֆեդերացիայի) սկզբունքով: Համադաշնությունը արդի իմաստով նոր ժամանակին հատուկ միջպետական կառույց է, որը սահմանվում է որպես քաղաքական, տնտեսական, պաշտպանական բնույթի որոշակի ընդհանուր շահերի և նպատակների բավարարման համար կամովին միավորված ինքնիշխան պետությունների միություն: Այն ստեղծվում է միջպետական պայմանագրերի հիման վրա, որոնցում հաստատվում են միության նպատակները, քաղաքական-վարչական մարմինները, միությանը տրվող լիազորությունները: Որպես կանոն՝ համադաշնությունն ունի ժամանակավոր բնույթ: Իր առջև դրված խնդիրները լուծելուց հետո այն կարող է լուծարվել կամ վերածվել դաշնության: Համադաշնության մասին գիտելիքները ամբողջացել են ավելի ուշ, միջազգային իրավունքի նոր հասկացությունների, նոր մեթոդների ու տեսությունների ձևավորման հետ: Իսկ նոր դարաշրջանի համադաշնության տեսական հայեցակարգերը հիմնվել են անցյալի, նախորդ դարաշրջանների տեսությունների նվաճումների վրա: Շահամիրյանի ստեղծագործություններում զարմանալի հստակությամբ մշակվել են համադաշնության հայեցակարգի շատ կարևոր հիմնադրույթ-

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 182:

ներ: Նրա խորաթափանց միտքը առաջադրել է իսլամական աշխարհով շրջափակված Հայոց պետության անվտանգության ապահովման և արտաքին հարաբերությունների կարգավորման գաղափարները, հատկապես քրիստոնյա մեծ պետության հետ համագործակցության հիմնական սկզբունքները:

Պահպանվել ու մեզ են հասել այդ նպատակով գրված «Կերպ դաշնադրութեան ի մեջ յերկուց ազգաց, հայոց և ռուսաց» երկու նախագծեր: Այդ վավերագրերի շուրջ հայ բանասիրության մեջ բուռն վեճեր են ծավալվել: Մեր խնդրից դուրս համարելով դրանց մանրամասն քննարկումը՝ նշենք միայն, որ, ըստ ներկա տիրապետող կարծիքի, դրանցից մեկի հեղինակը Շահամիր Շահամիրյանն է, իսկ մյուսինը՝ ռուսահայ գործիչներ Հովսեփ Արղությանը և Հովհաննես Լազարյանը<sup>16</sup>, որոնք պարզապես խմբագրել և ջանացել են ռուսական արքունիքի պահանջներին համապատասխանեցնել Շ. Շահամիրյանի գրած նախագիծը<sup>17</sup>: Շահամիրյանի նախագիծը հրատարակվել է «Դիվան հայոց պատմության»<sup>18</sup> գրքում, իսկ նրա ձեռագիր օրինակը պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում<sup>19</sup>: Խմբագրված տարբերակը առաջին անգամ հրատարակվել է «Ծիլն Ավարայրի» հանդեսում<sup>20</sup>: Նույն նախագծի մի օրինակը հրատարակվել է 1878 թվականին Ալեքսանդր Երիցյանի կողմից<sup>21</sup>, մյուսը՝ «Դիվան հայոց պատմութեան» ժողովածուի մեջ՝ Շահամիրյանի նախագծի հետ<sup>22</sup>:

Մեր հետազոտության արդյունքում եկանք այն եզրակացության, որ Շահամիրյանի առաջադրած նախագիծը իր հիմնական հատկանիշներով ժամանակակից իմաստով ներկայանում է որպես համադաշնության նախագիծ, իսկ Արղությանի և Լազարյանի խմբագրածը՝ ոչ թե հակադիր հասարակական հոսանքների, հայ կալվածատեր դասակարգի՝ մելիքների, բարձր հոգևորականության ու ազնվականության տենչանքներն արտահայտող վավերագիր է<sup>23</sup>, այլ հայ-ռուսական դաշնային պետություն ստեղծելու նախագիծ: Այսպիսով, 18-րդ դարի հայ քաղաքական մտքի պատմության անդաստանում ի հայտ են գալիս հայ-ռուսական միջպետական համադաշնության և դաշնային պետության ստեղծման նախագծեր: Պարզվում է, որ Շահամիրյանը իր մշակած համադաշնության նախագիծը 1779 թվականին ուղարկել է Հ. Արղությանին ու Հ. Լազարյանին՝ խնդրելով այն բազմացնել 200 օրինակ, բաժանեն հայ իշխաններին, տանուտերերին և հոգևորականներին և նրանց հավանությանն արժանանալուց հետո ներկայացնել ռուսական արքունիք<sup>24</sup>:

<sup>16</sup> Տե՛ս **Թադ. Ավդալբեգյան**, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում, «Հայագիտական հետազոտություններ», Եր., 1969, էջ 215-225:

<sup>17</sup> Տե՛ս **Ա. Մնացականյան**, 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», 1958, թիվ 4, էջ 139-160:

<sup>18</sup> «Դիվան հայոց պատմութեան», Դ, Թիֆլիս, 1899, էջ 731-737:

<sup>19</sup> Տե՛ս Կաթողիկոսական Դիվան, թղթ. 5, վավ. 55:

<sup>20</sup> Տե՛ս «Ծիլն Ավարայրի», 1866, դեկտեմբեր, ժԲ, էջ 620-622:

<sup>21</sup> Տե՛ս «Փորձ», երկրորդ տարի, թիվ 1, էջ 367-396:

<sup>22</sup> Տե՛ս «Դիվան հայոց պատմութեան», Դ, էջ 731-734:

<sup>23</sup> Տե՛ս **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 223-225:

<sup>24</sup> Տե՛ս «Դիվան հայոց Պատմութեան», էջ 737:



Ըստ 20 կետից բաղկացած այս նախագծի՝ պարսկա-թուրքական լծից ազատագրվելուց հետո Հայաստանում ստեղծվելու էր անկախ և ինքնիշխան պետություն, որը Ռուսաստանի համար պետք է դառնար հուսալի պատվար ընդդեմ Թուրքիայի ու Պարսկաստանի:

Առաջարկվող փաստաթուղթը ներկայանում է իբրև միջպետական պայմանագիր, որը պետք է ստորագրվեր ռուսների ու հայերի կողմից: Այնտեղ հաստատվում են միության նպատակները, քաղաքական-վարչական մարմինները, պատասխանատու պաշտոնները, միությանը տրվող լիազորությունները և այլն: Համաձայն նախագծի՝ Հայաստանը հռչակվելու էր ինքնիշխան հանրապետություն, որը կառավարվելու էր Հայոց տան՝ պառլամենտի կողմից. «Տունն հայոց կառավարեսցէ զազգ իւր և զաշխարհն ըստ օրինի հայոց և զոր ինչ աւելին յայնմանէ դիպուած և կառավարեսցին ի հաստատութեան նոյնոյ օրինաց»<sup>25</sup>:

Հայաստանի կառավարությունը գլխավորելու էր նախարարը (կառավարության նախագահը): Ռուսական կայսրությունը Հայաստանին ընդունելու էր իբրև ինքնիշխան պետություն, որն իր մշտական դեսպանն էր ունենալու Պետերբուրգում. «Կայսրութիւն ռուսաց ծանիցե գտունն Հայոց իբրև զթագաւոր Հայաստանյայց, և որոց զդեսպանն մեծ, բերան Հայոց, որ նստիցի ի Պետերբուրգ»<sup>26</sup>:

Երկու պետությունները միմյանց հետ կապված էին լինելու անխախտ բարեկամությամբ, որպես համադաշնության իրավահավասար անդամներ:

Այս դաշինքը առաջին հերթին յուրահատուկ ռազմաքաղաքական համագործակցություն էր, որի 20 հոդվածներից ութը կարգավորում էր ռազմական հարաբերությունները: Դաշնագրի Գ կետով Ռուսական կայսրությունը պարտավորվում էր 20 տարի ժամկետով Հայաստանում պահել 2000 ձիավոր, 2000 հետևակ և 2000 ռմբածիճ՝ անհրաժեշտ սննդամթերքով ու ռազմամթերքով հանդերձ:

Դ կետով նախատեսվում էր Հայաստանի ամրոցներն ու ռազմական օբյեկտները տրամադրել ռուսական զորամասերին:

Ե կետով Հայաստանը պարտավորվում էր կայսերական 6000 զինվորների ծախսի համար յուրաքանչյուր տարի վճարել 60.000 թուման, որից 30.000-ը՝ ոսկով և արծաթով, 30.000-ը՝ սննդամթերքով:

Զ կետով ուրվագծվում է Հայաստանից ռուսական զորքերի հեռանալու գրաֆիկը հետևյալ ժամանակացույցը. առաջին 2000-ը կվերադառնան 10, երկրորդը՝ 15, երրորդը՝ 20 տարուց հետո:

Դաշնագրի Ժ կետով նախատեսվում էր, որ անհրաժեշտության դեպքում Հայաստանը պարտավոր է Ռուսաստանին տրամադրել մինչև 6000 զինվոր և կայսրությունից ստանալ նույն ձևով ու չափով փոխհատուցում:

Թեև համադաշնության կողմերն ունեն ինքնիշխանություն, այնուամենայնիվ դաշնագրի Ը և Թ հոդվածներով նախատեսվում էր, որ Հայաստանը սկզբնական շրջանում, ի նշան հնազանդության, տարին մեկ անգամ

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 736:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 737:

ռուսաց կայսրին պետք է ընծայեր խորհրդանշական հարկեր՝ ընդամենը 20 մսխալ ոսկի, 3 ձի և 6 խոյ:

Հայոց տունը կայսրությանը ընդունում է որպես ազատարարի՝ մնալով բարեկամ նրա բարեկամների և թշնամի՝ նրա թշնամիների հետ: Ռուսական կողմը նույնպես պարտավորվում է հայերի բարեկամներին ընդունել որպես բարեկամ, թշնամիներին՝ թշնամի:

Ստեղծվելիք համադաշնության համար Շահամիրյանը կարևորում է նաև հարավկովկասյան տարածաշրջանի երկրների՝ հատկապես Վրաստանի և Աղվանքի ընդգրկման խնդիրը: Այս առիթով պայմանագրի ժե կետում ասվում է, որ տարածաշրջանով և ազգաբնակչությամբ հայերը, վրացիները և աղվանները, լինելով հին ժամանակներից միասին, այժմ ևս բարեկամ են միմյանց, ուստի անհրաժեշտության պահին նրանք կարող են մտնել համադաշնության մեջ՝ օգտվելով նույն արտոնություններից ու պարտականություններից, ինչ հայերը:

Ինքնիշխան պետությունների համադաշնության հատկանիշ է նաև տնտեսական համագործակցության այն համակարգը, որ նախատեսվում էր ԺԳ և ԺԴ կետերով:

Ռուսաստանի արհեստավորները և վաճառականները ազատորեն կարող են մտնել Հայաստան, ինչպես հայ գործարարները, վճարելով հարկ և մաքս՝ ըստ հայոց սովորության և օրենքի: Հայերը նույնպես աներկյուղ կարող են մտնել Ռուսաց աշխարհ՝ վճարելով հարկ և մաքս՝ համաձայն ռուսական սովորության և օրենքի:

Համադաշնության հատկանիշ ունի քննարկվող նախագծի հատկապես 20-րդ հոդվածը, ըստ որի՝ երկու ինքնիշխան պետությունների միջև վիճելի հարցեր առաջանալու դեպքում իրավարարի դերը պետք է կատարի երրորդ՝ չեզոք պետությունը, տվյալ դեպքում՝ գերմանական կայսրը: «Եթե հանդիպեսցի ինչ սխալանք, յանդիմանութիւնք կամ՝ զանազանութիւնք ի մէջ երկուց ազգաց տէրութեանց Ռուսաց և Հայոց, առ որս խռովութիւնք բոլորովիմբ արգելյալ է և վրէժխնդրութիւնք փակեալ, պարտ լիցի երկուց կողմանց զգանգատս և զպատասխանիս իւրեանց ընծայել առ ի սպաս ամենայն փառաց արժանի կայսերն Հռովմայ այսինքն Գերմանիոյ. և ի վերայ որոց ի նմանէ լեալ վճիռն լիցի երկուց կողմանց արդարութեան»<sup>27</sup>:

Հայ-ռուսական դաշնագրի առաջադրված այս նախագիծը ռուսական կառավարությանն են ներկայացրել Հովսեփ Արղությանն ու Հովհաննես Լազարյանը: Սակայն այն մերժվել է ցարական կառավարության կողմից՝ պատճառաբանությամբ, թե «...թագաւորք ընդ թագաւորաց կարեն դնել զդաշինս, զի ձերուն ով է թագաւորն, որ համարձակիցի զդաշինս խնդրել...»<sup>28</sup>:

Հաշվի առնելով թելադրող՝ ռուսական կողմի պահանջները՝ Հ. Արղությանը և Հ. Լազարյանը Շահամիրյանի նախագծի հիման վրա կազմում են նոր նախագիծ, ըստ որի՝ Հայաստանը թուրք-պարսկական լուծը թոթափե-

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 737:

<sup>28</sup> Մատենադարան, ձեռ. թիվ 2699, թերթ 102-ի ա:

լուց հետո պետք է հպատակվեր Ռուսաստանին, այնպես, ինչպես միջնադարում հպատակվել էր Բյուզանդիային ու Պարսկաստանին: Հայոց թագավորը պետք է ընտրվեր ռուսական արքունիքի կողմից և ազգությամբ կարող էր լինել հայ կամ ռուս<sup>29</sup>:

Ըստ այս նոր փաստաթղթի՝ հայ-ռուսական համադաշնության փոխարեն պետք է ստեղծվեր հայ-ռուսական դաշինք, որով Հայաստանը՝ որպես հարաբերական ինքնուրույնություն ունեցող պետություն, գտնվելու էր գերտերության կազմում: Հայ-ռուսական դաշնային պետությունը պետք է ունենար ընդհանուր տարածք, ընդհանուր քաղաքացիություն, ընդհանուր օրենսդրություն և իշխանության ընդհանուր մարմիններ: Ըստ այս նախագծի՝ Հայաստանը միայն որոշ քաղաքական ինքնավարությամբ էր օժտվելու: Այն պետք է ունենար միայն վարչատարածքային կազմավորումներ: Փաստորեն, դաշինքի մեջ մտնող հայոց պետությունը զրկվում էր ինքնիշխանությունից: Թեև այս նոր նախագիծը ևս ռուսական արքունիքը մերժեց նախկին պատճառաբանությամբ, այսուհանդերձ, հնդկահայ լուսավորիչների ներդրումը հայ իրավաքաղաքական մտքի ձևավորման ասպարեզում հսկայական էր: Այն ազգային անկախությունից դարեր շարունակ զրկված ժողովրդի արթնացած ոգու աննախադեպ թռիչք էր: Հնդկահայ լուսավորիչների առաջադրած մտքերը ոչ թե մեկուսի, պատահական արտահայտություններ էին, այլ հասարակական կառուցվածքի մասին ամբողջական իրավաքաղաքական ուսմունք, որը ներառում էր օրենսդիր, գործադիր, տեղական ինքնակառավարման և դատական մարմինների համակարգը: Նրանք մշակեցին պետական կառավարման ձևերի՝ սահմանադրական միապետության, պառլամենտական հանրապետության, և պետական կառուցվածքի՝ միակազմ, դաշնային, համադաշնային հարաբերությունների հաստատման հիմնական սկզբունքները: Այս բոլոր ձեռքբերումներն արդյունքն էին հայ հասարակական շրջաններում հասունացած ազատագրական ձգտումների:

**АКОБ МАНУЧАРЯН, ГЕНЗЕЛ МАНУЧАРЯН – *Виды правления и устройства Армянского государства по концепции армянских просветителей из Индии.*** – В XVIII веке, опираясь на достижения западной общественной мысли, армянские просветители разработали принципы государственного устройства, структурных форм государства и межгосударственных отношений; на основе этих принципов и должна была возникнуть и развиваться независимая Армения. В статье проанализированы принципы построения государства, сформулированные просветителями, которые представляли многочисленную армянскую общину Индии. Однако в Западной Европе и Северной Америке идеи о новом общественном строе зарождались и, видоизменяясь, постепенно воплощались в жизнь по ходу победивших освободительных движений и буржуазных революций. Напротив, в армянской действительности передовые принципы и программы остались нереализованными в силу того, что освободительное движение армян потерпело поражение.

<sup>29</sup> Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք դ, Թիֆլիս, 1899, էջ 734:

Последующие события сложились таким образом, что для реализации этих идей армянскому народу понадобилось пройти 150-летний путь борьбы.

**НАКОБ MANUCHARYAN, HENZEL MANUCHARYAN – *The Concept of Indian Armenian Illuminators on the Forms of Government and Structure of Armenian State.*** – In Armenian reality, in XVIII century, on the level of western social achievements, the principles of state system, its structure and intergovernmental relations were developed. But, as opposed to Western Europe and North America, where the ideas of establishment of a new social system were created parallel to victories of liberation movements and were immediately put into effect, in Armenian reality it is shaped with the appearance of these movements and this is because of the defeat of the latter that these ideas and programs remained unrealized.

For Armenian people the subsequent events were such that for the realization of these ideas a way of 150-year-old struggle was needed.